ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 25 2022 № 2

ԱՐՎԵՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ИСКУССТВОВЕДЕНИЕ
ART STUDIES

ՀՏԴ՝ 7.072.2
DOI: 10.52971/18294316-2022.25.2-194

ՀԵՏԵՐԿՐԱՇԱՐԺՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏԿԵՐԱԳԻՐԸ. ԳՐԻԳՈՐ ՆԱԼԲԱՆԴ

Արաքս Մարգարյան

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ

Բանալի բառեր՝ *երկրաշարժ, Լենինական, փաստագիր, աղետյալ քաղաք, 1980-ական թվականներ, վառ գունապնակ, պոստիմպրեսիոնիզմ, Թերլեմեզյանի ուսումնարան, ինքնատիպ ձեռագիր, դրամատիզմ:*

Հրապարակման մեջ ներկայացնում ենք գյումրեցի գեղանկարիչ Գրիգոր Հարությունյանի՝ հայտնի Նալբանդ անվամբ, ստեղծագործությունը, որը մնում է անհայտ անգամ արվեստագետների հանրության համար: Մարդ, որի մասին գրեթե չկան տեղեկություններ, ով կենդանության օրոք չի ցուցադրվել, իսկ արվեստը գրեթե չի ներկայացվել: Այդուհանդերձ, Գրիգոր Նալբանդը մնում է հետերկրաշարժյան Լենինականի ամենաբնորոշ ու վառ փաստագիրներից, որին հաջողվել է վրձնի ու կտավի օգնությամբ պատմել աղետյալ քաղաքի խավարի ու ցրտի, կորուստների և վերագտնումի, նրա բնակիչների քարացած ու սառած հոգիների անվերջանալի դեգերումների, մարդկային տկար մարմնի ու հոգևոր լույսի, մարդ մնալու կարոտի մասին…

Նախաբան. 1960-ականներին ասպարեզ եկան նկարիչներ, որոնց աշխատանքներում ընդգծվում էր նախևառաջ արվեստագետի ինքնատիպ մտածողությունը, սուբյեկտիվ աշխարհընկալումը, ուրույն նկարչական ձեռագիրը, արտահայտչական անսովոր զինանոցը: Գուցե պատահական չէր, որ Հայաստանի ժամանակակից արվեստի նորաբար ու վառ ներկայացուցիչները, որոնք կանգնած էին արվեստի հիմքերի վերափոխման ճանապարհին, ծնունդով շիրակցիներ էին՝ գեղանկարիչներ Մինաս Ավետիսյանը, Աշոտ Հովհաննիսյանը, իսկ 1980-ականներից արդեն՝ Այվազ Ավոյանն ու Գրիգոր

Նալբանդը: Այն, ինչ հայտնի է «Շիրակի գունազգացողություն» անվամբ, առավել բնութագրական է այս նկարիչների ստեղծագործություններին, որոնցում գույնը ստանում էր դրամատիկ հնչեղ երանգավորում, իսկ կերպարները՝ խորհրդանշական բովանդակություն: Չէ՞ որ Մինասի «Ջաջուռ» կտավը առավել ամբողջական է արտացոլում Շիրակի բնաշխարհի էությունը՝ վեհացնելով տաք ու սառը գույների հակադրամիասնությունը, գույնի սիմվոլիկ, հնչեղ էությունը: Վառ գունապանակով էր օժտված նաև Նալբանդը, որին իրավամբ կարելի է անվանել հայկական Գոգեն: Նրա կտավներն աչքի են ընկնում տարածածավալական կառուցվածքով, գունեղ, վառ, թանձր, լոկալ քսվածքներով հագեցած և ուրույն եզրագծերով ագուցված մակերեսներով: Դեղինն ու դարչնագույնը մոգական լույսով են առլեցուն. դրանք ներթափանցում են դիտողի հոգու խորքերը՝ առանձնահատուկ փայլ ու հնչեղություն հաղորդելով կտավներին: Այդ վառվռուն դեղինը տեսնելու համար Վան Գոգը, ժամանակակիցների վկայությամբ, ներշնչվում էր աբսենտով և աշխատում բարկ արևի տակ, իսկ Նալբանդը ոգեշնչվում էր հարազատ մարդկանցից ու շրջապատող իրականությունից: Նա, իր սերնդակիցների նման իմաստավորելով պոստիմպրեսիոնիստների արվեստի ուժը, նրանց հռչակեց իրեն ուսուցիչ: Սակայն Նալբանդը երբեք չընդօրինակեց մեծ վարպետներին, այլ վերցրեց նրանց արվեստի սկզբունքը՝ աշխարհին նայել բաց աչքերով ու սրտով. սիրել, տրվել, տառապել ու անկեղծորեն պատմել այդ ամենի մասին…

Նալբանդը չափազանց անկեղծ է. ինչպես բոլոր նվիրյալ արվեստագետները, նա էլ պատմում է իր կյանքի պատմությունը, կյանքի իր հայեցակետի մասին, որը մասամբ իդեալականացված է (օրինակ՝ «Ադամ և Եվա», «Առավոտ»), մասամբ էլ՝ դրամատիկ ու տխուր (օրինակ՝ «Սպասում», «Գաղթ»): Նրա համար ներշնչման աղբյուր էր առաջին հերթին իր ընտանիքը՝ կինը, որդիները: Նա հյուսում էր իր կյանքի հեքիաթը, որտեղ տիրում էր սերը: Եվ այդ պատմությունը վեր է հառնում սովորական մարդկային կյանքից, ստանում վերժամանակյա իմաստներ ու խորհուրդներ: «Ադամ և Եվա» կտավում կինն ու տղամարդը եդեմական այգում խայտում են անհոգ ու խաղում դրախտի պտուղների հետ: Նրանք իրենց անգիտության մեջ նույնքան գեղեցիկ են, որքան և հմայված…Նույն շարքի մեկ այլ պատկերում նկարված են այր ու կին՝ թիկունք թիկունքի տված՝ կազմելով մեկ ամբողջություն՝ ասես վերարտադրելով «Այր ու կին՝ մեկ մարմին» արտահայտությունը: Սա մեկ էություն է, տարբեր ծավալների համադրությամբ ստեղծված հիերոգլիֆային պատկեր: Դեղինի ու կարմիրի մինիմալիստական գունային հարաբերությունը ավելի է ընդգծում նկարչի ասելիքը, իսկ սև ուրվագիծը՝ ամբողջացնում պատկերը:

Կնոջ դերը մեծ է եղել Նալբանդի կյանքում: Տիկին Կարինեն սիրով ու ջերմությամբ է պարուրել սիրելի ամուսնուն, եղել է նրա հավատարիմ ընկերը թե՛ լավ օրերին, թե՛ հիվանդության ու նեղության մեջ: Պատահական չէ, որ նրա կերպարը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Նալբանդի արվեստում. նա պատկերված է իբրև ամոթխած փերի («Առավոտ»): Մյուս պատկերում տիրամայր է, որ գուրգուրում է իր զավակին («Մայրություն»): Երրորդ նկարում՝ վշտից կքված տառապող էակ («Սպասում»)… Որպես կանոն՝ նա կնոջը պատկերում է դեղինով, որը այս դեպքում համահունչ է

արևի, կյանքի, լույսի, սրբության հետ: Կինը կենարար աղբյուր է, կյանքի իմաստների ու զգացածի սուբլիմացիա:

Նկարչի կյանքի մասին տեղեկությունները աղքատիկ են, թեպետ ապրում են նրա ընկերները, հարազատները, զավակները: Գրիգոր Նալբանդը ծնվել է 1955 թ. փետրվարի 26-ին Լենինականում: Հայտնի է միայն, որ նա ավարտել էր Թերլեմեզյանի ուսումնարանը, ցանկություն է ունեցել ուսումը շարունակել Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայում: Բայց ինչ-ինչ պատճառներով երազանքները իրականություն չեն դարձել: Լենինգրադում թողնելով իր լավագույն գործերը, որոնց մասին միշտ հիշում էր ափսոսանքով՝ նա վերադարձել էր հայրենի քաղաք ու տարիներ շարունակ դասավանդել Ախուրյանի շրջկենտրոնի արվեստի դպրոցում: Եղել է չհասկացված, ունեցել է մի քանի աշակերտներ: Մեկ-երկու անորոշ տեղեկություններ, գրեթե ոչ մի փաստաթուղթ, հուշ: Սա միստիկա է հաղորդում նկարչի կերպարին, ավելի հետաքրքիր դարձնում նրա արվեստի վերծանումը: Փորձում ենք հասկանալ՝ ո՛ր պահն է Նալբանդի արվեստում եղել բեկումնային, ե՛րբ է նա «արտաքսվել» իր իսկ կերտած դրախտից և հայտնվել իրականության հետնաբեմում: Օգնության եկավ նրա աշակերտներից մեկը՝ արվեստագետ Կարեն Բարսեղյանը, որն իր հուշերում ամրագրել էր նկարչի կերպարը.այն առնչվում է հետերկրաշարժյան դժվար տարիներին[1]:

….1988 թվականի ավերիչ աղետը դարձավ 33-ամյա նկարչի կյանքի ջրբաժանը, ինչպես շատերի համար: Երկրաշարժը դարձավ անջրպետ, որը բաժանեց գյումրեցի նկարիչների անցյալը և ներկան: Նկարիչների մի մասը անդրադարձավ կրոնին /Գ. Մանուկյան, Գար. Մանուկյան/՝ փորձելով գտնել իրեն տանջող հարցերի պատասխանները: Եղան նկարիչներ, որոնք աղետի մասին խոսելիս ձևավորեցին իրենց պատկերային սիմվոլիկ լեզուն, արտահայտչամիջոցները /Հ. Ղուկասյան/: Մյուսներն էլ գերադասեցին լքել քաղաքը՝ հեռուներում փնտրելով իրենց սիրելի բնօրրանի ուրվագծերը /Է. Եղիգարյան, Հ. Ադամյան/: Նալբանդի համար, ասես, փուլ էր եկել իրեն քաջ ծանոթ աշխարհը. փոխվել էր երկիրը, փոխվել էր սիրելի քաղաքը, կորցրել էր հարազատ մարդկանց: Զգայուն նկարիչը հայտնվել էր նոր իրականության մեջ՝ տառապագին փորձելով վերագտնել իր «ես»՝ բազում կորուստների ու տանջալից հարցերի հորձանուտում: Նրա հավատամքը՝ զգալ ու նկարել ապրած ժամանակը, ակամայից դարձնում էր նրան ժամանակագիր: Փոխվում են նաև Նալբանդին բնորոշ գուներանգներն ու պատկերները: Երազանքների աշխարհից նա հայտնվում է իրականություն, որ նրան նայում էր անպատուհան տների կույր խոռոչներով, մերկացած ծառաբներով ու հուսահատության թանձր փոշով: Անշունչ առարկաների մեջ Նալբանդը դնում է էություն ու «խոսեցնում» դրանք, պատմում հետերկրաշարժյան Գյումրու ցուրտ ու սոված ձմեռների, անհույս ու անլույս գարունների մասին... Երբ նրան ակնարկել էին թեմաների միօրինակության մասին, նա պատասխանել է. «Ուրիշ էլ ի՞նչ նկարեմ, սա է իրականությունը»:

Հետերկրաշարժյան քաղաքային պատկերները («Գյումրի», «Նրբանցք N9») կատարված են սեզանական պնդությամբ ու ծավալատարածական լուծումներով: Այստեղ

[1] Կ. Բարսեղյանի հետ զրույցից՝ 11. 03. 2016:

երևում են նկարչի գրագիտությունն ու ամուր ձեռքը: Նա չի կորցնում իրականության զգացողությունը, որը փոխանցվում է հենց իր՝ Նալբանդի պատկերացումով: Փոխվում է նաև նրա ներկապանակը: «Մտորումներ», «Անձրևից հետո», «Գյումրի», «Պարիսպ» կտավներում վառ դեղինի կողքին հայտնվում են մուգ կապույտ երանգներ, ասես նկարչի կտավներում տեղի է ունենում պայքար լույսի ու խավարի միջև, կյանքի ու մահվան, գոյության ու կործանման… Այս շրջանին բնորոշ ներկապնակով նա պատկերել է Լենինականը՝ քաղաքին ոչ բնորոշ գունաշարով: Դա հենց 1990-ականների Լենինականն է՝ սառնությամբ ու խավարով ներծծված: Սակայն նկարիչը երբեք չի կորցնում հույսը քաղաքի ապագայի հանդեպ: «Փողոց», «Նրբանցք N9» կտավներում դարձյալ հայտնվում է երբեմնի դեղինը /միայն թե ոչ անխառն ու ցնծուն/, հագեցնում կտավները լույսով ու ջերմությամբ:

Իսկ մարդիկ… մարդիկ մի՞թե նախկին դրախտի բնակիչներն են, որոնք չէին ենթարկվում ձգողականության սովորական օրենքներին… «Գաղթականներ» կտավում նրանք կքել են ապրումներից ու հոգսերից, հոգնել գոյության անվերջանալի պայքարից, երբ հանապազօրյա սև ու կոպիտ հացը երազանք էր ու փափագ: Այս ամենը կարող է հասկանալ միայն 90-ականներին Գյումրիում ապրած սերունդը: Այդ օրերի լավագույն հանրագումարն է «Լուռ վիշտ» կտավը: Բնորդը պատկերված է ինտերիերի կապույտ անկյունում. ասես կյանքի հորձանուտը նրան զրկել է տարածությունից: Մարմինը կքված է, սեղմված, դիրքը՝ գլխիկոր…. Նա ծածկել է դեմքը, ասես կորցրել է այն: Առաջին պլանում պատկերված կոպիտ ձեռքերն ու ոտքերն ընդգծում են կերպարի ֆիզիկական ուժն ու հոգու անզորությունը: Ծնկներին դրված բեռը հիշեցնում է քար: Ինքը՝ բնորդը ևս քարացել է վշտից ու տառապանքից: Նկարը խորհրդանշում է սառնություն ու հուսահատություն. մեկ կերպարով նկարիչը արտահայտել է ողջ սերնդի տրամադրությունը:

Նալբանդը սուր էր վերապրում իրականությունը. իր ապրած ամեն վայրկյանը նա իմաստավորում էր մարդկային կրքերի ու հույզերի հորձանուտում: Իսկ հետերկրաշարժյան քաղաքում դրանք անչափելի էին, և Նալբանդի նման տիեզերական բարության ու սիրո պահանջով ապրող մարդը ի զորու չէր ամբարելու և իմաստավորելու չարիքի ահռելիությունը: Պատահական չէ, որ նրա նուրբ ու զգայուն հոգին չի դիմանում բաժին ընկած տաժանելի բեռին… Նալբանդին, ինչպես և իր պաշտելի հոլանդացուն, բաժին ընկան հոգեկան ցավն ու հիվանդությունը…. Մերթ ընդ մերթ նրան թվում էր, որ ինքը Գրիգոր Նարեկացին է… ու փորձում էր այս կերպարով օգտակար լինել մարդկանց: Նա կյանքից հեռացավ 2005թ., իսկ նրա առաջին անհատական ցուցահանդեսը որդին՝ Գոռը, կազմակերպեց 2010 թվականին, Ասլամազյան քույրերի պատկերասրահում: Բացմանը ներկա էին նրա հարազատներն ու բարեկամները. հնչում էին գնահատականի ու հարգանքի խոսքեր մարդու հանդեպ, որն իր ողջ կյանքը անմնացորդ նվիրել էր արվեստին:

Եզրահանգում. Նկարչի արվեստի ուսումնասիրությունից հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

Գրիգոր Նալբանդի կյանքն ու ստեղծագործությունը երկու առանցքների շուրջ են՝ սեր ու տառապանք… Խավարից հետո մարդ առավել պայծառ է տեսնում լույսը և տառապանքի բովից ելած՝ է՛լ ավելի է փարվում կյանքին, գնահատում նրա ամեն մի վայրկյանը: Այս երկու բևեռների միջև է հյուսվել Գրիգոր Նալբանդի արվեստը: Արվեստ, որը լայն առումով նորարարական է և ինքնատիպ, լուսավոր ու ողբերգական: Նա ապրեց կարծես աննկատ կյանքով, հեռու փառքից ու ճանաչումից, զուրկ հեշտ կյանքի բարիքներից: Նա որոնում էր իր դրախտը և որոնում երկրաշարժից կիսավեր Գյումրիում…



«Ադամ և Եվա» շարքից/ Կտավ, յուղաներկ /80x80

«Առավոտ»/ Կտավ, յուղաներկ /68x68// «Մայրություն» / Կտավ, յուղաներկ /82x110



«Նրբանցք N9» /Կտավ, յուղաներկ /80x60 //«Անձրևից հետո»/ Կտավ, յուղաներկ /50x70

«Լուռ վիշտ» /Կտավ, յուղաներկ /80x80//«Գաղթականներ»/ Կտավ, յուղաներկ/100x100

ХУДОЖНИК ПОСТЗЕМЛЕТРЯСЕННОГО ГОРОДА: ГРИГОР НАЛБАНД

Маргарян А. В.

Ключевые слова: *Ленинакан, землетрясение, документалист, израненный город, 1980-ые, постмодернизм, училище им. Терлемезяна, яркая палитра, своеобразный почерк, драматический.*

Рассматривается творчество гюмрийского живописца Григора Арутюняна, который известен под именем Налбанд. Он остается неизведанным даже для искусствоведов. О нем отсутствует информация, его творчество неизучено. И все же… Григор Налбанд является самым типичным представителем постземлетрясенного Ленинакана, ярким документалистом, кому удалось с помощью красок и кисти рассказать о тьме и холоде разрушенного города, об утрате и об обретении, про окоменевших от горя жителей, о вечных поисках, о тщедушном человеческом теле и свете души, про мечту оставаться человеком …

GRIGOR NALBAND - THE DOCUMENTARIAN OF THE POST-EARTHQUAKE CITY

Markaryan A. V.

Key words: *Leninakan, documentarian, earthquake, disaster city, 1980s, postimpresionism, Terlemezyan's study, bright palette, original manuscript, dramatic.*

The artworks of Gyumri painter Grigor Harutyunyan known as Nalband remain unknown among the artists' community. There is almost no information about him, there haven't been any exhibitions of his artworks during lifetime and his art has never been presented. Nevertheless… Grigor Nalband remains the quintessential documentarian of post-earthquake Leninakan. With the help of canvas and brush he managed to present the dark and the cold, loss and regain, the endless wander of citizens' frozen and petrified soles, the frail body and spiritual light, the longing to remain human…

Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն

1. **Աղասյան Ա. -2009,** «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները 19-20-րդ դարերում (1828-1991), Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 292 էջ:
2. **Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ. -2009,** Հայ արվեստի պատմություն, Երևան, «Զանգակ-97», 575 էջ:
3. **Մարգարյան Ա. -2022,** Գրիգոր Նալբանդ, «Գյումրեցի նկարիչներ» շարք, 32 էջ:
4. **Մարգարյան Ա. -2016,** Շիրակ աշխարհի ստեղծագործողներ, Երևան, 60 էջ:
5. **Մարգարյան Ա. -2018,** Գյումրեցի նկարիչների ստեղծագործությունները՝ 1988թ. աղետի 30- ամյա տարելիցի համատեքստում, Գիտական տեղեկագիր Շիրակի Մ.Նալբանդյանի անվ. պետական համալսարանի, Գյումրի, 1, էջեր 109-115:

Ընդունվել է՝ 25. 08. 2022
Գրախոսվել է՝ 12. 10. 2022
Հանձնվել է տպ.՝ 28. 11. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին՝

Արաքս ՄԱՐԳԱՐՅԱՆ՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ
ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղի կերպարվեստի տեսության ամբիոնի վարիչ.
Շիրակի Մ. Նալբանդյանի անվ. պետական համալսարանի դասախոս,
էլ. հասցե՝ araxmargaryan@gmail.com